ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2017թվականի N62-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԽՈՏԱՆՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստան Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N46 որոշումն ու Կոտայքի մարզի Կապուտան համայնքի 4-րդ փողոցի, 1-ին փակուղու 1-ին տան բնակիչ Վարդան Արծրունու Բաղդասարյանի դիմումը, որոշում եմ .

1.Խոտանված, 30 000 /երեսուն հազար/ դրամ արժողությամբ, 1998թվականի արտադրության, /գրանցման համարը՝ SA 038932/, կապույտ մետալիկ գույնի, ունիվերսալ տիպի, մարդատար Հոնդա CRV մակնիշի ջարդոնի վերածված ավտոմեքենան ուղղակի վաճառքով օտարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնքի 4-րդ փողոցի, 1-ին փակուղու 1-ին տան բնակիչ Վարդան Արծրունու Բաղդասարյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նշված գումարը համայնքի բյուջե վճարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

05 սեպտեմբերի 2017թ
գ Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, (0222) 6-84-51nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2017թվականի N63-Ա

ՀՐԱՉԻԿ ՀԱՅԿԱԶԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի, ,,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, Հրաչիկ Հայկազի Գևորգյանի՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 122 հասցեի հողամասում իրեն կողմից 1986 թվականին ինքնակամ կառուցված 88,09 քմ մակերեսով շինությունները և այգետնակը օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Երիցուկ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1 Հրաչիկ Հայկազի Գևորգյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 122 հասցեի հողամասում իրեն կողմից 1986 թվականին ինքնակամ կառուցված 88,09 քմ արտաքին մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=34,38 ք.մ.մակերեսով այգետնակը, 13,12քմ մակերեսով բաց պատշգամբը, , S=4,41 ք.մ .մակերեսով աստիճանավանդակը, 4,53ք:մ և 10,57ք.մ մակերեսներով օժանդակ շինությունները, 6,6ք.մ մակերեսով ծածկը, 8,09ք.մ մակերեսով ջրավազանը, 2,92ք.մ., 2,58ք.մ և 0,89ք.մ մակերեսներով պարիսպները ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3. Ճանաչել Հրաչիկ Հայկազի Գևորգյանի սեփականության իրավունքը վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 122 հասցեում գտնվող 500քմ-ից ավել օգտագործվող 86,5 քմ հողամասի նկատմամբ՝ այն անհատույց տրամադրելով իրեն.

5.Հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Նուռնուս համայնք, ,,Կոտայք,, թաղամաս, 1-ին փողոց թիվ 122:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գ.Նուռնուս
08 սեպտեմբերի 2017թ.